ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Ա. Շ. ՍԻՄՈՆՅԱՆ

XIX դ. Հայաստանում և հայկական գաղթօջախներում, հայ հասարակության մեջ ու հայկական մամուլում հրապարակ է գալիս ազգային պատմաազգագրական արժեքները հավաքելու, պահպանելու և ուսումնասիրելու հիմնահարցը։ Հայ առաջադեմ հասարակությունը ազգային մշակույթի մնացորդներն «ուսումնախույզ հնագիտաց ուշադրությանը հանձնելը» համարում էր անհետաձգելի գործ։ Առաջ է գալիս ազգային թանգարաններ հիմնելու խնդիրը։

Հայաստանում թանգարան հիմնելու առաջին փորձը կապված է հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի անվան և ջանքերի հետ։ Երևանում դպրոցական տեսչի պաշտոնը վարելու տարիներին նա ոչ միայն ինքն էր հնագիտական և ազգագրական իրեր հավաքում, այլև դա հանձնարարում էր ուսուցիչներին ու աշակերտներին։ Հավաքված նյութը Խ. Աբովյանը կենտրոնացրել էր իր՝ դպրոցին կից ստեղծած «Հայկական գավառագիտական կաբինետում»։ Թանգարան բացելու թույլտվություն ստանալու համար նա դիմել է Երևանի գավառապետին։ Սա էլ իր հերթին հատուկ զեկուցագիր է ուղարկել Կովկասի փոխարքային՝ հետևյալ բովանդակությամբ. «Երևանի գավառապետը տեղեկացրել է դպրոցների դիրեկտորներին, որ նա ցանկանում է պահպանել Հայաստանի հետաքրքրաշարժ և պատմական հուշարձանների մնացորդները, որոնք այնքան շատ են նրա ենթակա գավառում, և տեղի բնակիչները հանդգնում են հափշտակել իրենց կառույցների մեջ օգտագործելու համար։ Այդպիսով, նրա հրամանով բռնվել են Բաշ-Գառնիի սահմաններից բերված չորս գեղեցիկ սյունախոյակներ, որտեղ, ինչպես հայտնի է պատմությունից և ավանդությունից, եղել է Տրդատի հոյակապ պալատը, և տարվել են գավառական դպրոցի մոտ դրվել։ Այնուհանդերձ, նա պատշաճ է համարում գավառական դպրոցին կից հիմնել մի սրահ (կաբինետ), որտեղ կգտնվեն երկրում հայտնաբերված հնություններն ու պատմական արձանագրությամբ քարաբեկորները, ինչպես նաև բնության բոլոր հրաշալիքները։

Սրա հետևանքով, դպրոցների դիրեկտորը հրամանագրեց գավառական դպրոցում տեսչի պաշտոնը վարողին, որպեսզի նա ընդունի գավառապետի ուղարկած բոլոր մնացորդները և հնության հուշարձանները, և ընդհանրապես բնության բոլոր հետաքրքրաշարժ արտադրանքը, հանգամանորեն կատարելով նրանց նկարագրությունը և գույքավորումը և այդ բոլորից կազմակերպելով կաբինետ»[1]։ Ամենայն հավանականությամբ, Խ. Աբովյանը ձգտում էր, որ դպրոցում հավաքված թանգարանային բազմատեսակ նյութերն օգտագործվեն դասերի ժամանակ՝ աշակերտների աշխարհայացքն ընդլայնելու նպատակով։ Սակայն նրա ցանկությունը չիրականացավ, քանի որ երկու տարի անց, 1948 թ., նա անհետ կորավ։

XX դ. սկզբին Հայաստանում ուսումնական միակ լուրջ հաստատությունը Էջմիածնի Գևորգյան ճեմարանն էր, որն իր հիմնադրման առաջին իսկ օրերից հայ առաջադեմ հասարակության ուշադրության կենտրոնում էր։ Հիշատակելի են հայ բարերարների մի շարք կտակներ, նվիրատվություններ, որոնք արվել են ճեմարանի ուսումնական ընթացքն ապահով ու բարձր մակարդակի վրա պահելու նպատակով։ Այսպես, 1910 թ. վերջին Վ. Քանանյանը իր վաղամեռիկ որդի Վարդանի հիշատակը հավերժացնելու նպա-

---

[1] ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 6, էջ 46։

տակով 30 հազ. ռուբ. գումար է նվիրում Էջմիածնի Գևորգյան ճեմարանին՝ նրան կից մանկավարժական թանգարան հիմնելու համար[2]։ 1911 թ. սկզբին Գերագույն հոգևոր խորհուրդը քննել է մանկավարժական թանգարան հիմնելու խնդիրը և հավանություն տվել։ Մանկավարժական թանգարանի հիմնադրման հարցը քննարկվել է նաև ճեմարանի մանկավարժական խորհրդի նիստում[3]։

Մանկավարժական թանգարանի հիմնադրման անհրաժեշտության հարցին հետաքրքիր հոդված է նվիրել ժամանակի ճանաչված մանկավարժ Գ. Էդիլյանը։ Նրա կարծիքով նման թանգարան հիմնելը խիստ անհրաժեշտ էր, այն մեծապես կնպաստեր ճեմարանի ուսանողության գործնական աշխատանքների կատարելագործմանը, պիտանի մասնագետների պատրաստմանը[4]։ Խոսելով մանկավարժական թանգարանի անհրաժեշտության մասին, Գ. Էդիլյանը գրում է, որ ճեմարանում սովորողներն այս կամ այն առարկան յուրացնում են բացառապես դասալսումներով։ Նրանք ձեռքի տակ չունեն դասախոսությունների ընկալմանը նպաստող ցուցադրական իրեր, որի պատճառով էլ առանձին առարկաների յուրացումը դառնում է վերացական. «Մանկավարժական մուզեյը կոչված է այդ պակասի առջեն ևս առնելու։ Ուսանողն այստեղ հարմարություն կունենա անձամբ տեսնելու, փորձելու այն իրերը, առարկաները, որոնց մասին խոսում է ուսուցիչը դասավանդման ընթացքում»[5]։

Մանկավարժական թանգարանի ցուցանմուշները չպետք է ծառայեին միայն ճեմարանի սովորողների ուսուցման գործին։ Թանգարանային իրերից պետք է օգտվեին նաև դպրոցների աշակերտները։ Նույնիսկ պետք է առանձնացվեին որոշ հավաքածուներ՝ այլ դպրոցներ ուղարկելու համար։ Նախատեսվում էր նաև ժամանակ առ ժամանակ թանգարանում կազմակերպել մանկավարժական դասընթացներ՝ գյուղական ուսուցչության հսկմար և այլն[6]։

1911 թ. սեպտեմբերի 24-ին Էջմիածնում տեղի ունեցավ մանկավարժական թանգարանի հանդիսավոր բացման արարողությունը[7]։ Սակայն Հայաստանում այլ թանգարաններ հիմնելու բոլոր այլ փորձերն անհաջող անցան։ Գիտական թանգարանների հիմնադրման գործն իրականացավ փոքրինչ ավելի ուշ՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո։ Հետաքրքիր է, որ Խորհրդային Հայաստանում հիմնված առաջին թանգարանը Հայաստանի կենտրոնական մանկավարժական թանգարանն էր։

Թանգարանի հիմնումը առնչվում էր Հայաստանում կրթության զարգացման, դպրոցաշինության առաջին քայլերի հետ։ Հայկական խորհրդային դպրոցի ստեղծումն ընթանում էր երկրի քայքայվածության ծանր պայմաններում։ Անբավարար էին դպրոցական շենքերը, չկային դասագրքեր, զգացվում էր դասատուների պակասը։ Երիտասարդ խորհրդային հանրապետության կառավարությունը, սակայն, ձեռնարկում էր հնարավոր միջոցները՝ ժողովրդական կրթության պահանջները բավարարելու համար[8]։ Այս ուղղությամբ առաջին քայլերից մեկը պարտադիր, ձրի, մայրենի լեզվով կրթություն իրականացնելու մասին որոշման ընդունումն էր։ 1921—1922 ուսումնական տարում դպրոցների թիվը հասավ 506-ի՝ 47,7 հազ. աշակերտներով[9]։

---

2 Գ. Էդիլյան, Մանկավարժական մուզեյ (Արարատ, 1911, էջ 147—164),
3 Նույն տեղում, էջ 167,
4 Նույն տեղում, էջ 152,
5 Նույն տեղում, էջ 151,
6 Նույն տեղում, էջ 152,
7 Արարատ, 1911, էջ 820—821,
8 Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, 1969, էջ 126,
9 Խորհրդային Հայաստան. 1920—1925 (ժողովածու), Երևան, 1926, էջ 292,

Հայաստանում դպրոցաշինության գործում կարևոր դեր խաղաց նաև մանկավարժական թանգարանի հիմնադրումը։ Երևանի ու գավառների դպրոցների, մանկապարտեզների իրազեկական կարիքները բավարարելու համար Հայաստանի կառավարությունը հանձնարարեց Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին՝ Երևանում հիմնել մանկավարժական թանգարան, ինչպես նաև կապվել գավառների հետ և ամենուրեք ստեղծել նման թանգարանների մասնաճյուղեր[10]։

Լուսժողկոմատի ժողովրդական կրթության գլխավոր վարչությունը, քննարկելով մանկավարժական թանգարան հիմնելու հարցը, որոշեց, որ այն սկզբում ունենալու է կենսաբանական (կենսաբանական, բուսաբանական և մարդաբանական ենթաբաժիններով), ֆիզիկական, քիմիական, հանքաբանական, տեխնոլոգիական, աշխարհագրական (ֆիզիկական, քաղաքական, վարչական) բաժիններ, հետագայում՝ նաև մաթեմատիկական, հասարակագիտական և երաժշտական[11]։

ՀԽՍՀ լուսժողկոմատը երևանաբնակ մանկավարժ Վ. Սիդորովին հանձնարարեց շտապ զեկուցագիր գրել՝ Հայաստանում մանկավարժական թանգարան հիմնելու անհրաժեշտության մասին, ինչպես նաև կազմել նրա ստեղծման ծրագիրն ու աշխատանքային պլանի նախագիծը։ Առաջնորդվելով եվրոպական երկրներում և Ռուսաստանում գործող նման թանգարանների աշխատանքային պլաններով, դրանք արդիականացնելով և համապատասխանեցնելով խորհրդային դպրոցի պահանջներին, Վ. Սիդորովը կազմեց Հայաստանում մանկավարժական թանգարան հիմնելու իր պլանը (1921 թ. հունվարի 27), որը մանրամասն պատկերացում էր տալիս խորհրդային Հայաստանի կենտրոնական մանկավարժական թանգարանի նպատակների և ապագա աշխատանքային ծրագրերի մասին։ Այդ պլանի համաձայն Հայաստանի մանկավարժական թանգարանի առջև հրատապ խնդիր էր դրվում դպրոցի աշխատողներին հնարավորություն տալ հավաքված և ստեղծված ցուցանմուշներով հարստացնել իրենց գիտելիքները հատկապես բնական գիտությունների ասպարեզում։ Ծրագրի երկրորդ կետի համաձայն, մանկավարժական թանգարանը քաղաքների և գյուղերի դպրոցներին պետք է օգներ իր ստեղծած ցուցանմուշներով։ Այն պետք է դառնար կենտրոնական ցուցադրական մի կազմակերպություն, որից պետք է օրինակ վերցնեին և նմանատիպ թանգարաններ հիմնեին նաև հանրապետության այլ քաղաքներում ու բնակավայրերում։ Սովորողներին պետք է հնարավորություն տրվեր մշտապես այցելել թանգարան, լսել էքսկուրսավարի բացատրությունները։ Նախագծի հեղինակն առաջարկում էր թանգարանային նյութի հավաքման և ցուցադրման ժամանակ չսահմանափակվել Հայաստանի տարածքով։ Նա կարծում էր, որ սովորողներին ավելի հիմնավոր գիտելիքներ տալու և ճանաչողության սահմաններն ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է ցուցանմուշների փոխանակություններ կատարել ոչ միայն մեր երկրի, այլև արտասահմանյան երկրների նմանատիպ թանգարանների հետ։ Հայաստանի մանկավարժական թանգարանի համար նախատեսվում էր ունենալ կենդանաբանական, բուսաբանական, մարդաբանական, կազմախոսական, երկրաբանական, բյուրեղագիտական, աշխարհագրական, արդյունաբերական, գյուղատնտեսական, մաթեմատիկական, ֆիզիկայի և քիմիայի բաժիններ։ Անհրաժեշտ էր նաև թանգարանին կից հիմնել արհեստանոց, որն առաջին հերթին պետք է կարգի բերեր և ցուցադրման համար պիտանի դարձներ թանգարանային նյութը, ինչպես նաև ստեղծեր ցուցանմուշների կրկնօրինակներ և բաժաներ դպրոցներին։ Արհեստանոցը պատրաստելու էր նաև քարտադարաններ, կենդանաբանական, հյուսվածքաբանական և այլ ցուցա-

---

10 Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ժողովրդական կոմիսարների 1920—1922 թթ. հաշվետվությունը, Երևան, 1923, էջ 122։

11 Նույն տեղում, էջ 123։

նմուշներ, ինչպես և քարտեզներ, կենդանիների և թռչունների խրտվիլակներ, գլոբուսներ, տարբեր մոդելներ և այլն։

Մանկավարժական թանգարանի հիմնական աշխատանքների մեջ էր մանելու տարբեր դասընթացների կազմակերպումը՝ ուսուցիչների վերապատրաստման համար։ Միաժամանակ կազմակերպվելու էին տարբեր թեմատիկ դասախոսություններ, ցուցադրական դասեր և այլ միջոցառումներ։ Պետք է գործեր մասնագիտական գրադարանը՝ ընթերցասրահով, ինչպես նաև կազմակերպվեր մասնագիտական գրականության, մասնավորապես մեթոդական գրականության թարգմանությունը։

Լուսժողկոմատը, ողջունելով Վ. Սիդորովի՝ մանկավարժական թանգարան հիմնելու այս ծրագիրը[12], 1921 թ. փետրվարի 3-ին նրան հանձնարարեց ձեռնամուխ լինել Հայաստանի կենտրոնական մանկավարժական թանգարանի հիմնադրման աշխատանքներին[13]։

Հայաստանի մանկավարժական թանգարանի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1921 թ. դեկտեմբերի 18-ին[14]։ Նորաբաց թանգարանի վարիչ Գ. Հակոբյանը Հայաստանի լուսժողկոմատ ուղարկած իր մի զեկուցագրում հավաստիացնում էր, որ թանգարանը «նվիրումով ծառայելու է սոցիալիստական դաստիարակության ասպարեզում կոթական գործին։ Թանգարանը իբրև անհրաժեշտ մի հաստատություն իր նպատակն է ունենալու ընդլայնել և լրացնել դպրոցական պարապմունքները, շարժել կենդանի հետաքրքրություն դեպի գիտության զանազան բաժինները, դառնալու է դպրոցի անհրաժեշտ լրացում»[15]։

Ճշմարիտ է, մանկավարժական թանգարանը բացվեց, սակայն բացակայում էր հիմնականը. չկային ցուցադրման համար պիտանի առարկաներ։ Նախկին դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում եղած աղքատիկ ցուցանմուշները ցաք ու ցրիվ էին եղել։ Անհրաժեշտ էր դրանք ի մի բերել, դրանց հիման վրա ցուցադրություն կազմակերպել։ Բանն այն է, որ Առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդող տարիներին Հայաստանի դպրոցական ողջ համակարգը փլուզվել էր, ուսումնական կյանքը երկրում գրեթե դադարել էր։ Եղած առանձին դպրոցական շենքերը վեր էին ածվել զորանոցների և հոսպիտալների։ Դպրոցներում եղած լաբորատոր իրերը անխնամ թափվել, կուտակվել էին նկուղներում։

1921 թ. հոկտեմբերին ՀԽՍՀ ԺողկոմխորհՀ դեկրետ ընդունեց, որը զինվորական և այլ հիմնարկներին պարտավորեցնում էր անհապաղ ազատել և լուսժողկոմատին հանձնել բոլոր դպրոցներն ու ուսումնական հաստատությունները։ Որոշումն անմիջապես իրականացվեց[16]։

Օգտվելով կառավարական այս որոշումից, մանկավարժական թանգարանը ձեռնամուխ եղավ դպրոցներից և սեմինարիաներից խնամքով հավաքելու անխնամ թափված լաբորատոր գույքը, գործիքները, մաքրեց, վերանորոգեց դրանց մի մասը՝ վերածելով նոր ստեղծված թանգարանի ցուցանմուշների, մյուս մասը բաժանեց վերաբացված և նոր բացվող դպրոցներին։

1922 թ. հունվարին Երևանում կազմակերպվեց դպրոցական աշխատողների մի մեծ հավաք, որտեղ որոշվեց «բնագիտական պարապմունքներն անցկացնել թանգարանի լսարաններում, անմիջապես օգտվել թանգարանի հարուստ հավաքածուներից և գործիքներից, որոնք այնքան հեշտացնում են անցնելիք նյութի յուրացումը»[17]։

---

12 ՀԽՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀՍՇԿՊԱ), ֆ. 122, ց. 1, գ. 240։

13 Նույն տեղում, թ. 3—4։

14 Նույն տեղում, գ. 243, թ. 12։

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում, ֆ. 144, ց. 1, գ. 444, թ. 85։

17 Նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 243, թ. 13։

Դպրոցական պարապմունքներն սկսելուն պես թանգարանի աշխատակիցները և ուսուցիչները մանկավարժական թանգարանում գրեթե ամեն օր անցկացրել են պարապմունքներ, դրել են փորձեր, որոնց մասնակցել են հարյուրավոր աշակերտներ։

Հայաստանի մանկավարժական թանգարանն իր գործունեության առաջին իսկ օրերից խնդիր էր դրել «համապատասխան գիտական պաշար և պատրաստություն ունեցող անձերից կազմակերպել թանգարանային գործին հմուտ հրահանգիչներ՝ Հայաստանի գլխավոր կենտրոններում նմանօրինակ մանկավարժական թանգարաններ կազմակերպելու և կանոնավոր կերպով ղեկավարելու համար»[18]։ Իր աշխատանքային գործունեության առաջին ամիսներին թանգարանը համալսարանի գիտնականների օգնությամբ հավաքեց և գիտական նկարագրության ենթարկեց հանքաբանական և բուսաբանական ժողովածուներ, նախապատրաստեց դրանց ցուցադրությունը։ Թանգարանում բացված կաբինետը, լաբորատորիաները յուրօրինակ կենտրոններ էին ուսուցիչների համար, ուր նրանք պատրաստում էին դասը, ստանում խորհուրդներ։ Կարճ ժամանակամիջոցում մանկավարժական թանգարանը դարձավ Երևանի և հարևան շրջանների մանկավարժների հավաքի, մանկավարժական հարցերի քննարկման վայր։

1921—1922 ուս. տարում թանգարան են այցելել 8.612 մարդ[19]։

1923 թ. դեկտեմբերի 11-ին Հայաստանի լուսժողկոմատի վարչության հերթական նիստում քննարկվեց մանկավարժական թանգարանի վարիչի հաշվետվությունը՝ կատարված աշխատանքի մասին։ Հավանություն տալով դրան, որոշվեց ավարտել և վերջնական տեսքի բերել թանգարանի բոլոր բաժինները, դասավանդման պահանջներին համապատասխան վերակառուցել ցուցադրությունները։ Միաժամանակ պահանջվեց ուժեղացնել բուսաբանական բաժնի աշխատանքները, ավելացնել դպրոցներում գրվող փորձերի թիվը, Թիֆլիսից և այլ քաղաքներից բերել բույսերի, ծաղիկների սերմեր և այլն։ Առաջարկվեց զարկ տալ աշխարհագրական բաժնի աշխատանքներին, այդ նպատակով կապեր հաստատել միութենական այլ թանգարանների հետ։ Որոշվեց 1924 թ. հունվարին հրավիրել մանկավարժական թանգարանի ճյուղերի աշխատողների համագումար (ֆինանսներ ունենալու դեպքում)[20]։

1924 թ. հունվարի 25-ին մանկավարժական թանգարանի նախաձեռնությամբ Երևանում հրավիրվեց թանգարանի աշխատողների խորհրդակցություն, ուր քննարկվեցին մի շարք հարցեր և ընդունվեցին համապատասխան որոշումներ[21]։ Որոշումներից մեկը վերաբերում էր հանրապետության դպրոցներում բնագիտական անկյուններ և թանգարաններ ստեղծելու հարցին։ Խորհրդակցության մասնակիցները նշեցին, որ անհրաժեշտ է աշակերտության շրջանում սեր արթնացնել հայրենի բնության նկատմամբ, նրանց ներգրավել տեղերում բնագիտական թանգարաններ ստեղծելու գործին։ Խորհրդակցության մասնակիցները հանրապետության լուսժողկոմատին խնդրեցին հրահանգավորել քաղաքային լուսբաժիններին՝ տեղերում կազմակերպել բնագիտական թանգարաններ՝ հետևյալ բաժիններով. բնագիտական, տեղի օգտակար հանածոների, տեղի գյուղատնտեսության և արդյունաբերության։ Իր հերթին մանկավարժական թանգարանը պարտավորվում էր խորհուրդներով, առաջարկություններով, մեթոդական ցուցումներով օգնել նման թանգարանների կազմակերպմանը։

---

18 Նույն տեղում, թ. 14։

19 Ա. Անտոնյան, Կենտրոնական մանկավարժական-գավառագիտական թանգարանը (Գիտությունը և գիտական-հետազոտական աշխատանքը Խորհրդային Հայաստանում 1920—1930, Երևան, 1931, էջ 116)։

20 ՀԽՍՀ ՀՀՍՇԿՊԱ, ֆ. 122, ց. 1, գ. 295։

21 Նույն տեղում, թ. 4։

Ինչպես երևում է, մանկավարժական թանգարանի առաջին երկու տարիներին կատարած աշխատանքի մասին տնօրեն Գ. Հակոբյանի մանրամասն զեկուցագրից, թանգարանի աշխատողների ջանքերով հանրապետության դպրոցներում, գյուղերում, զինվորական միավորումներում կարդացվել են մի շարք դասախոսություններ, կազմակերպվել են գիտական արշավախմբեր դեպի Արագածի փեշերն ու Սևանա լճի ափերը։ Այդ արշավախմբերը հանքաբանական, բուսաբանական հարուստ հավաքածուներ են ձեռք բերել, կատարել են մթնոլորտային դիտումներ։ Նմուշներից լավագույնները ցուցադրվել են 1923 թ. վերջին կազմակերպված ցուցահանդեսում։

Մանկավարժական թանգարանի բոլոր բաժիններն ունեին իրենց աշխատանքային պլանը, որն ամեն տարի քննարկվում և հաստատվում էր Լուսժողկոմատի սոցդասգլխվարչության կողմից։

1920-ական թվականների կեսերին արդեն մանկավարժական թանգարանը վերջնականապես կազմավորվել էր, զգալիորեն հարստացել էին նրա բոլոր բաժինները։

Թանգարանի գործունեության մասին մեզ է հասել հետաքրքիր մի զեկուցագիր, ըստ որի, թանգարանում գործել են կենսաբանական, ֆիզիկական, հանքաբանական, քիմիական և աշխարհագրական բաժինները։

Մանկավարժական թանգարանն ուներ նաև գրադարան՝ 2.500 կտոր մասնագիտական գրականությամբ[22]։

Այս հաջողությունների կողքին, սակայն, եղել են նաև թերություններ, բացթողումներ, հիմնականում մասնագետ աշխատակիցների և ֆինանսական սղության պատճառով։

Մանկավարժական թանգարանի գործունեության առաջին տարիներին այցելուներն հիմնականում եղել են աշակերտներ, ուսուցիչներ, ուսումնական գործընթացի հետ կապված մասնագետներ։ Հետագայում միայն, երբ թանգարանը հարստացավ առավել արժեքավոր նյութերով, այցելուների թիվը զգալիորեն աճեց։ Աշակերտներից և ուսուցիչներից բացի, թանգարան էին այցելում նաև բանվորներ, գյուղացիներ, կարմիրբանակայիններ և այլն։ Թանգարանի այցելուների թիվը 1930 թ. հասավ 101,740 մարդու[23]։

1927—1928 ուս. տարվա սկզբում լուսժողկոմատի կոլեգիայի որոշմամբ կենտրոնական մանկավարժական թանգարանն ստացավ գավառագիտական թեքում, իսկ 1930—31 ուս. տարում վերակազմվեց և դարձավ Հայաստանի գավառագիտական թանգարան, ապա մանկավարժական բնույթի ցուցանմուշները, ֆունկցիաներն ու գույքը հանձնվեց Երևանի մանկավարժական տեխնիկումին[24]։

Մանկավարժական թանգարանը Խորհրդային Հայաստանի թանգարանների առաջնեկն էր։ Ու թեև համեմատաբար կարճ գործեց (շուրջ մեկ տասնամյակ), սակայն կարևոր ու շնորհակալ գործ կատարեց Հայաստանում դպրոցաշինության զարգացման գործում։

ПЕРВЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ МУЗЕЙ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

А. Ш. СИМОНЯН

Резюме

Идея создания педагогического музея всегда находилась в центре внимания передовой армянской общественности. Первая попытка основания при школе подобного музея была предпринята Хачатуром Абовяном.

---

22 Նույն տեղում, ֆ. 122, ց. 1, ա. 146, թ. 6—7։

23 Ա. Անտոնյան, նշվ. աշխ., էջ 115—120։

24 Խորհրդային Հայաստան, 7. I. 1931։

В начале XX в. педагогический музей был основан при Эчмиадзинской семинарии Геворгян.

Одним из первых шагов в культурном строительстве в Советской Армении было основание Педагогического музея Армении, имевшего отделы зоологии, ботаники, геологии, географии, минералогии, химии и физики. Собрание музея широко использовалось в учебном процессе.

Педагогический музей Армении—первенец советских музеев республики. И хотя он просуществовал сравнительно недолго, но сделал большое и благодарное дело в развитии школьного строительства Армении, воспитания и образования подрастающего поколения.

THE FIRST PEDAGOGICAL MESEUM OF THE SOVIET ARMENIA

A. Sh. SIMONIAN

S u m m a r y

The idea of pedagogical museum foundation has always been in the centre of the Armenian advanced community attention. The first attempt to found such a museum attached to a school, was undertook by Khachatur Abovian.

At the beginning of the XX c. a pedagogical museum attached to Echmiadzin Gevorgian Seminary was founded.

The foundation of pedagogical museum of Armenia with sections of zoology, botany, geology, geography, mineralogy. chemistry and physics was one of the first steps in cultural construction of the Soviet Armenia. Collections of the museum were largely used in educational process.

Pedagogical museum of Armenia is the first of the Soviet museums of the republic. And though it existed comparatively not so long, it has done a great and greateful job in the development of school construction in Armenia, training and education of the rising generation.